ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"_20___" __հունիսի_2012թ № 86-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ <<ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ>> ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ, ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԸՆԹԱՑԻԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի N 94-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 72-րդ հոդվածի 1-ին կետերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի ա) ենթակետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 19-ի N24 արձանագրային որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության բնակչության առողջության առաջնային պահպանման 2008-2013 թթ. ռազմավարության ծրագրի>>, ՀՀ առողջապահության նախարարի 2005 թվականի նոյեմբերի 29-ի N 1116-Ա և 2008 թվականի նոյեմբերի 18-ի N 1661-Ա հրամանների պահանջների, որոշում եմ.

1. ՀՀ Սյունիքի մարզում առողջության առաջնային պահպանման և հիվանդանոցային բուժծառայությունների որակի ապահովման և բարելավման գործընթացների միասնական ղեկավարման և համակարգման նպատակով ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանն առընթեր ստեղծել մարզային <<Բուժօգնության որակի բարելավման խորհուրդ>>:

2. Հաստատել մարզային <<Բուժօգնության որակի բարելավման խորհրդի>> անվանական կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

3. Հաստատել մարզային <<Բուժօգնության որակի բարելավման խորհրդի>> կանոնակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

4. Բուժօգնության որակի ապահովման ընթացիկ աշխատանքները կոորդինացնող պատասխանատու անձ նշանակել ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ Ն. Գևորգյանին:

5. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Սյունիքի մարզպետի 2009 թվականի մայիսի 5-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում բնակչության առողջության առաջնային պահպանման որակի ապահովման մարզային հանձնաժողովի կազմը, կանոնակարգը, միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը հաստատելու մասին>> N 94-Ա որոշումը:

6. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. հունիսի 20
ք. Կապան

Հավելված N2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012թ հունիսի 20-ի N 86-Ա որոշման

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Բուժօգնության որակի բարելավման մարզային խորհուրդը (այսուհետ՝ «ՈԲԽ» կամ «Խորհուրդ») մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանն առընթեր ստեղծվող կոլեգիալ խորհրդատվական և որոշումներ կայացնող մարմին է, որի նպատակն է բարելավել մարզի բուժհաստատություններում մատուցվող առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) և հիվանդանոցային ծառայությունների որակը:
2.Որակի բարելավման մարզային խորհրդի հիմնական խնդիրն է իրականացնել մարզի ԱԱՊ և հիվանդանոցային ոլորտներում բուժօգնության որակի ապահովման գործընթացների մշակման, իրագործման և շարունակական զարգացման ընդհանուր ղեկավարում և հսկողություն:
3.Խորհուրդն իր առջև դրված նպատակը և խնդիրներն իրագործում է մարզի ԱԱՊ և հիվանդանոցային հաստատությունների գործունեության կանոնավոր ստուգազննման, գնահատման և ԱԱՊ հաստատությունների որակի բարելավման խորհուրդներին (ՈԲԽ) ու հիվանդանոցների որակի վերահսկման հանձնաժողովներին (ՈՎՀ) գործնական աջակցություն ցուցաբերելու միջոցով:

ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4.Խորհուրդը կայացնում է որոշումներ և մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության (ԱՍԱՎ) հաստատմանն է ներկայացնում առաջարկություններ մարզի առողջապահական ծառայությունների գործունեության վերաբերյալ՝ նպատակ ունենալով բարելավել մատուցվող ԱԱՊ և հիվանդանոցային ծառայությունների որակն ու արդյունավետությունը:
5. Խորհուրդն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1)տեղեկատվական և, անհրաժեշտության դեպքում, ուսուցողական աշխատանք՝ բուժօգնության որակին առնչվող նոր ազգային չափորոշիչների, նորմատիվային, հրահանգչական և խորհրդատվական նյութերի վերաբերյալ:
2)վերահսկում, ստուգազննում (մոնիտորինգի է ենթարկում) և գնահատում է մարզի ԱԱՊ և հիվանդանոցային հաստատություններում մատուցվող ծառայությունների որակը:
3)պահանջում, ստանում և վերլուծում է ստուգազննման միջոցով ձեռք բերված տվյալները, ամփոփում արդյունքները, ըստ այդմ՝ կայացնում որոշումներ:
4)որակի ստուգազննման և գնահատման հիման վրա առաջարկում/մշակում է ԱԱՊ և հիվանդանոցային ծառայությունների որակի բարելավմանն ուղղված հրահանգներ, ընթացակարգեր, միջոցառումներ, և համակարգում է դրանց ներդնումը բուժհաստատություններում:

5)առաջարկում/մշակում է ԱԱՊ և հիվանդանոցային ծառայությունների բարելավմանն ուղղված տեխնոլոգիական փոփոխություններ, և համակարգում է դրանց ներդնումը բուժհաստատություններում:
6)որակի բարելավման բացահայտված կարիքներից ելնելով պլանավորում և ձեռնարկում է միջոցներ՝ ուղղված բուժանձնակազմի մասնագիտական կարողությունների զարգացմանը:
7)համակարգում է ԱԱՊ և հիվանդանոցային ծառայությունների ոլորտում առավել հաճախ արձանագրվող անցանկալի դեպքերի, բժշկական սխալների վերլուծության, նախականխման և շտկման աշխատանքները:
8)համակարգում, աջակցում և վերահսկում է ԱԱՊ և հիվանդանոցային հաստատություններում բուժօգնության որակի սահմանված ցուցանիշերի ստուգազննման, բուժաշխատողների կատարողականի, սահմանված չափորոշիչներին կլինիկական դեպքերի վարման համապատասխանության, պացիենտների բավարարվածության ուսումնասիրման, ինչպես նաև մատուցվող ծառայությունների որակի գնահատման այլ գործընթացները:
9)կանոնավոր կերպով ստանում և ամփոփում է որակի ստուգազննման և գնահատման վերոհիշյալ միջոցառումների արդյունքները և, ըստ այդմ, մշակում և հանձնարարում է բուժօգնության որակի բարելավմանն աջակցող միջոցառումներ՝ հետագայում գնահատելով ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը:
10)սահմանված կարգով և պարբերականությամբ առողջապահական վերադաս մարմիններին ներկայացնում է հաշվետվություն իր ենթակայության բուժհաստատություններում որակի գործընթացների վերաբերյալ:

6.Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը համակողմանիորեն աջակցում է խորհրդին՝ երաշխավորելով անհրաժեշտ տեղեկատվության մատչելիությունը և նպաստավոր պայմաններ՝ խորհրդի արդյունավետ գործունեության համար:

ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

7.Խորհրդի թվակազմը սահմանվում է **9** անդամներից:
8.Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետն ի պաշտոնե հանդիսանում է որակի բարելավման մարզային խորհրդի նախագահը:
9.Խորհրդի կազմում ներգրավվում են մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության և մարզային առողջապահության համակարգում բուժօգնության որակի ապահովման համար պատասխանատու և շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներ: Խորհրդի կազմում կարող են ընդգրկվել նաև հանրության ներկայացուցիչ(ներ)՝ որպես մշտական կամ հրավիրվող անդամներ:
10.Խորհրդի անվանակազմը հաստատում է մարզպետը:
11.Խորհրդում անդամակցությունը կարող է փոփոխվել/դադարել ինչպես Խորհրդի նախագահի նախաձեռնությամբ, այնպես էլ խորհրդի անդամի խնդրանքով՝ փոխադարձ համաձայնությամբ:
12.Խորհրդի կազմը կարող է փոփոխվել փոխատեղման (ռոտացիոն) սկզբունքով, եթե այդպիսի որոշում կայացրել է խորհրդի հիմնադիրը:
13.Խորհրդի նախագահը նշանակում է խորհրդի քարտուղար, որն արձանագրում է խորհրդի նիստերը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԸ

14.Խորհրդի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով:

15.Խորհրդի նիստերը հրավիրվում են հերթական/պլանային կարգով՝ եռամսյակը մեկ անգամ, խորհրդի կողմից սահմանված ժամանակացանկով:
16.Խորհրդի արտահերթ նիստեր կարող են հրավիրվել խորհրդի նախագահի նախաձեռնությամբ, ինչպես նաև խորհրդի անդամների 1/3-ի պահանջով:
17.Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են խորհրդի անդամների առնվազն 2/3-ը: Խորհրդի նիստերին կարող են մասնակցել նաև հրավիրված անձինք:
18.Խորհրդի նիստը վարում է խորհրդի նախագահը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրա կողմից լիազորված խորհրդի անդամը:
19.Խորհրդի յուրաքաչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայնի քվեարկության (իրավունքի) փոխանցումը մեկ այլ անձի չի թույլատրվում:
20.Խորհրդում որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասար բաշխման դեպքում խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:
21.Խորհրդի նիստերն արձանագրվում են: Խորհրդի նիստի արձանագրության մեջ, որպես կանոն, նշվում են՝նիստի ամսաթիվը և վայրը,նիստին ներկա անդամները,նիստի օրակարգը, նիստի ընթացքում հնչած ելույթների համառոտագրերը, քվեարկության դրված հարցերը և քվեարկության արդյունքները,նիստում ընդունված որոշումները, արձանագրությունը ստորագրվում է նիստին մասնակցած խորհրդի անդամների կողմից:
22.Խորհրդի յուրաքանչյուր նիստի սկզբում վերանայվում է նախորդ նիստի արձանագրությունը, կայացված որոշումների կատարողականը և տրվում են համապատասխան հանձնարարականներ:
23.Նիստի որոշումներն ուղարկվում են մարզային բուժհաստատություններին՝ ըստ պատկանելության:
24.Կախված խորհրդի ընդունած որոշումների բնույթից՝ խորհրդի նախագահը կարող է դրանք ներկայացնել մարզպետի հաստատմանը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

25. Խորհրդի նախագահը.
1)ներկայացնում է խորհուրդը,
2)կազմակերպում է խորհրդի աշխատանքները,
3)գումարում է խորհրդի նիստերը և նախագահում է դրանք,
4)կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրումը,
5)ստորագրում է խորհրդի որոշումները/նիստերի արձանագրությունները:
26.Խորհրդի նախագահի բացակայության դեպքում խորհրդի նախագահի որոշմամբ նրա պարտականությունները կատարում է խորհրդի անդամներից մեկը:

ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

27.Խորհրդի կանոնակարգում փոփոխությունները կատարվում են հիմնադրի որոշմամբ և կցվում են որպես սույն կանոնակարգի հավելված:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Ղազարյան

Հավելված N1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012թ.հունիսի 20-ի N 86-Ա որոշման

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանն առընթեր

<< Որակի բարելավման մարզային խորհրդի>>

1. Նունե Գևորգյան – ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ, հանձնաժողովի նախագահ
2. Նելլի Գրիգորյան - <<Կապանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի ընտանեկան բժիշկ, հանձնաժողովի անդամ
3. Լևոն Հարությունյան - <<Գորիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ փոխտնօրեն, հանձնաժողովի անդամ
4. Նելլի Հարությունյան - <<Սիսիանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ ընտանեկան բժիշկ, հանձնաժողովի անդամ
5. Անիկ Գրիգորյան - <<Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա>> ՓԲԸ տնօրեն, որակի համակարգող, հանձնաժողովի անդամ
6. Նվարդ Խաչատրյան - <<Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն>> ՓԲԸ ընտանեկան բժիշկ, որակի համակարգող, հանձնաժողովի անդամ
7. Նաիրա Իսրաելյան - <<Քաջարանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ ընտանեկան բժիշկ, հանձնաժողովի անդամ
8. Տյոմա Սարգսյան – ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի առաջատար մասնագետ, հանձնաժողովի քարտուղար
9. Քրիստինե Մարության – ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի առաջատար մասնագետ, հանձնաժողովի անդամ
10. Լիլիթ Օհանյան - <<Վորլդ Վիժն Հայաստան>> ՄԲԿ փորձագետ, հանձնաժողովի անդամ /համաձայնությամբ/
11. Աննա Ոսկանյան – ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Ղազարյան